ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արագածոտնի մարզի «Արտենիի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրինությունը հայտարարում է մրցույթ «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» /5 դասաժամ/ առարկայի ուսուցչի թափուր տեղի համար: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին: Մրցույթին մասնակցել ցանկացողները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

1. Դիմում /Ձև 1/, մեկ լուսանկար 3-4 չափի,
2. Բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ /դիպլոմ/, (միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ),
3. Անձը հավաստող փաստաթուղթ,
4. «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճեն /առկայության դեպքում/
5. Ինքնակենսագրություն /Ձև 5/,
6. Այլ պետությունների քաղաքացիները ՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ /առկայության դեպքում/,
9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
10. Հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն /մասնակցած լինելու դեպում/:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 11-ից մինչև օգոստոսի 22-ը ներառյալ ամեն օր ժամը 10:00-ից 14:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա օգոստոսի 27-ին՝ ժամը 14:00-ին ՀՀ Արագածոտնի մարզի «Արտենիի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, Թալին համայնք, գ. Արտենի, Բաղրամյան 7, «Արտենիի հիմնական դպրոց» ՊՈԱԿ:

Տեղեկությունների համար զանգահարել (094) 61-70-83 հեռախոսահամարով:

ՀՀ Արագածոտնի մարզի «Արտենիի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրինություն: